№ 270 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 270

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ
ՀԱՅՐԴ ՏԱՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչեւ յունվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակագրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան ԶՐԻԱԲԱՐ հետեւեալ գրքերից ՄԷԿՆ ՈՒ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մաքր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչեւ «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Գիրքը բաղկացած է 408 էջից։

2) Վրթանի (Ա. Քալանթարի) Մանրանկարները, I և II հատոր։

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։ Գիրքը բաղկացած է 520+472 էջից։

Մինչեւ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ը բաժանորդագրվածները կը ստանան ԵՐԿՐՈՐԴ գիրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները—ԱՌԱՋԻՆ գիրքը։

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ծանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ա. Գ. ԽՌԽՌԵԱՆՑԻ
Գրասենեակային պատկանելիքների և արդուզարդային առարկաների
ՀՆԱԳՈՑՆ ԽԱՆՈՒԹԸ,
որ գտնվում էր Երեւանեան հրապարակի վրա, Թամամշեվի շինութեան մէջ,
ՓՈԽԱԴՐՎԵԼ Է
իր սեփական տունը, Միխայլովսկի պր. և Սեմեոնովսկայա փող. անկիւն, № 31/6.
առ. 1122. 2—1

ԼՈՑՍ Է ՏԵՍԱԾ
„ՎԵՐԱԾՆՈՒՆԴ"
Ընկերաբանական ամսաթերթը
նուիրուած
Ողբացեալ մեծ հայրենասէր
ԱԼԷՔՍԱՆԴՐ
ՔԱԼԱՆԹԱՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ
(հանգուցեալի մեծադիր պատկերով միասին)
Արտատպուած է՝
Ողբացեալի վերջին յօդուածը «ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ» խորագրով։
Կը գրեն՝ Տիգրան Քէլէքեան, Օնոնիկ Չիֆթէ-Սարաֆ, Միհրան Յովհաննէսեան, Արշակ Ալպոյաճեան, Քէչեան, Արմենակ Հայկունի, Գաւուրճեան և ուրիշներ։
Հասցէն՝—Boîte Postale Ottomane №167, Constantinople.
(օ.մ.) առ. 1044. 5—2

Թէլիճի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգից ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՅՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒՐԲԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱԿՈՒՄՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ԲՆՆՏԷՆՆԱՆ ՇԱՆԹԱՑԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՂՔՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ԶԲԻ։ Бебутовская 23. тел. 7—92.
(ա.օ.) առ. 977. 100—28

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիգիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւններ։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Նէլիզաւէտինսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի։
(չ.ու.կ.) առ. 901. 100—13

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ
Այսօր, շաբաթի, դեկտ. 4-ին, տեղի կունենայ չեղած խստ հետաքրքրական ներկայացում 3 բաժանմունքից՝ մասնակցութեամբ ամբողջ առաջնակարգ արտիստների։ Այսօր կրնամարան—Վախտուրովը՝ Ուրսայի հետ, Կոպլէվը՝ Լավրենովի հետ։ Ռուս-չվէյցարական գոտեմարտ Շեմբերս-Ցիպսի և Սէպնիկայի միջեւ։ Կրմշամարտէ նոնպէս՝ Սոլովիէվը—Ջեմս-Ջակսոնի հետ։
առ. 1121. 1—1

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆՔ ՏԱԼԻՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ

Պօլիտեխնիկումի շինութեան տեղի ընտրութեան առիթով վրաց մամուլի մի քանի օրգանների և վրացիների ձեռքով հրատարակվող ռուսերէն թերթերի սկսած արշաւանքը և յարձակումները հայերի դէմ մենք համարում ենք աւելի քան անարդար, անտեղի, անհիմն, ուստի և գոչում ենք. «Դադարեցրէ՛ք ձեր յարձակումները»։

Այս աղաղակը մենք արձակում ենք խորապէս համոզված և գիտակից, որ մեր բերանով խօսում է ազգերի հաշտարարութեան, եղբայրութեան և արդարութեան ձայնը։

Եթէ ընդունենք նոյնիսկ, որ Թիֆլիսի հայ բուրժուազիան, որին վրաց թերթերը մեղադրում են ազգային շովինիզմի և ագրեսիվ քաղաքականութեան ձգտումների մէջ—մի բան, որ կատարելապէս ճիշդ չէ, որովհետեւ Թիֆլիսի հայ բուրժուազիան շատ և շատ հեռու է ազգասիրութիւնից, մինչ այն աստիճան, որ նրա տնից վտարված է մայրենի լեզուն—արդարև, ամեն միջոց գործ է դրել, որ պօլիտեխնիկումի շինութիւնը լինի Նաթալուղում, և այդ արել է ազգայնականշովինիստ նպատակով, դարձեալ վրաց թերթերը ոչ մի իրաւունք և հիմն չունին իրանց թոյնը և մաղձը թափել հայ ժողովրդի վրա, որի համար բնաւ նշանակութիւն չունի, թէ որտեղ կը լինի պօլիտեխնիկումը՝ Նաթալուղ թէ Սաբուրթալո։ Հայ ժողովրդին հարկաւոր է միայն, որ Թիֆլիսում հիմնվի բարձր կրթական հաստատութիւն—պօլիտեխնիկում։ Եւ որովհետեւ, ինչպէս ցոյց են տալիս բոլոր փաստերը, պօլիտեխնիկումի շուտափոյթ հիմնարկութիւնը և բացումը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ նա շինվի Նաթալուղում—այդպէս են դասաւորվել բոլոր հանգամանքները և պայմանները—որովհետեւ միայն Նաթալուղում հիմնվելու դէպքում ձեռք են բերվում ֆինանսական կարեւոր միջոցները՝ պօլիտեխնիկումի շինութեան համար, շատ պարզ է, որ հայերը, ինչ դասակարգի և խաւի որ պատկանեն, պէտք է նախընտրութիւն տան Նաթալուղին և ոչ Սաբուրթալոյին, որի ընտրութեան դէպքում պօլիտեխնիկումի բացումը կարող էր տասնեակ տարիներով յետաձգվել։

Վերջապէս, ինչ փաստ կայ ոչ միայն պնդելու, այլ նոյն իսկ կասկած ունենալու, որ երկրի բարձր իշխանութիւնը ընտրել է Նաթալուղը ի հաճոյս հայերի։ Եւ եթէ այդ իշխանութիւնը իր ընտրութիւնը կայացնէր Սաբուրթալոյի վրա և ոչ Նաթալուղի, միթէ հայերը իրաւունք կունենային և թոյլ կը տային իրանց բարձրացնել այն աղմուկը, որ այսօր բարձրացնում են մեր վրացի եղբայրներից նրանք, որոնք կամենում են անպատճառ թշնամութիւն զրգռել հայ և վրացի տարրերի միջև, կռւի հրաւէր կարդալ և սպառնալիքներ անել։

Մենք ուրիշ նպատակ չենք տեսնում այն յօդուածների մէջ, որոնցից այսօր քաղուածքներ ենք բերում մամուլի տեսութեան մէջ, բացի ձգտումից՝ թշնամական զգացումներ զրգռել երկու եղբայրակից և հարեան ժողովուրդների մէջ։

Մեր վրացի եղբայրները ասում են մեզ, որ իրանց մէջքերը սովոր չեն հարուածների, որ իրանց մէջ մենք չենք գտնի թոյլ և անպաշտպան հակառակորդներ։ Նախ, մենք հայերս—և այս մասին մենք համարձակ կարող ենք ասել, որ հանդիսանում ենք թարգման հայերի ցանկութեան—ընաւ ցանկութիւն և միտք չունենք կռիւ սկսել կամ անել մեր վրացի եղբայրների հետ, որովհետեւ կռիւ ոչ մի առիթ չենք տեսնում. երկրորդ, եթէ հակառակ մեր կամքի և ցանկութեան, կռիւ սկսվի, մեր հայերի մէջքերն ևս սովոր չեն հարուածների և յանձինս մեր վրացիները չեն գտնի թոյլ և անպաշտպան հակառակորդներ։

Խելքի եկէք, դուք ամենքդ, որ մոռացել էք պատմութիւնը, անցեալը, որ կուրացած էք կրքերով. հանդիսատ թողէք և՛ վրաց և՛ հայոց ժողովուրդները. մի զրգռէք ամբոխի վատ ինստինկտները, շղթայազերծ մի անէք գազանային հակումները։ Պարզ ասացէք. ո՞րն է ձեզ համար աւելի թանգագինը և ամենաէականը—պօլիտեխնիկո՞ւմը թէ Սաբուրթալոյի հողերի արժէքի բարձրացումը, այս կամ այն կալուածատիրոջ շահերը։

Փոխանակ ուրախանալու, որ, փառք Աստուծոյ, վերջապէս, համաժողովրդական ցանկութիւնը՝ Թիֆլիսում հիմնված տեսնել մի բարձր կրթական հաստատութիւն, այսօր իրագործված է. փոխանակ միանալու, համախմբվելու, համերաշխ և եղբայրական ոյժերով ձեռնարկելու պօլիտեխնիկումի կազմակերպութեան, դուք գոռում էք, թէ ոչ մի վրացի, ոչ մի ռուս ոտք չի կոխի այդ հաստատութեան մէջ։ Ե՞րբ վրաց և ռուս ժողովուրդը իրաւունք տուեց ձեզ խօսել այդպէս նրա անունից և այդպէս վարկաբեկել նրանց։ Մենք աւելի քան համոզված ենք, որ երբ պօլիտեխնիկումը բացվի, վրացի և ռուս երիտասարդները, հայ երիտասարդների հետ, կը լցնեն գիտութեան տաճարը և ստանալով այդտեղ բարձր ուսում, կը մտնեն կեանքի մէջ՝ բարձրացնելու իրանց հայրենիքի տնտեսական և մտաւոր մակարդակը։

Ցանուն բարձր կրթութեան, յանուն մեր երկրի գերագոյն շահերի մենք կոչ ենք անում և յորդորում մեր վրացի եղբայրներին և գործիչներին՝ մի կողմ թողնել ամեն գժտութիւն, թշնամական զգացումների զրգռում և խմբվել մի գաղափարի շուրջը—որքան կարելի է շուտով բանալ պօլիտեխնիկումը։

Հաւատացէք, վրացի եղբայրներ, որ սպառնալիքները, յարձակումները աւելի ձեզ՝ վրացիներիդ կը վնասեն, քան մեզ՝ հայերիս։

Խորհուրդ ենք տալիս ձեզ դադարեցնել ձեր անարդար և անտեղի յարձակումները. խորհուրդ ենք տալիս ձեզ հանգիստ թողնել հայ ժողովուրդը։ Եթէ հայ բուրժուաները աշխատել են Նաթալուղի համար, և, ըստ ձեր կարծիքի, ամեն տեսակ ներելի և անները-ելի միջոցների են դիմել իրանց նպատակին հասնելու, զուր էք կարծում, որ նրանք այդ արել են հայկական ազգասիրական քաղաքականութեան համար. նրանք վարվել են այնպէս, ինչպէս կը վարվէր և վրացի, և ռուս, և թուրք, և հրէայ բուրժուան. նրանք գործել են իրանց շահերի համար։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

Կ. Պօլիս.—Եկաւ գերմանական զինուորական միսսիան, որ ընդունվեց մեծ պատիւներով. Դեներալ Զանդէրսը օֆիցէրների հետ ներկայացաւ մեծ վէզիրին։

Միսիոնարների խորհուրդը այսօր քննեց այն հարցը, թէ ինչպիսի պատասխան է տալու եռապետեան համաձայնութեանը գերմանական միսսիային հրաւիրելու առիթով արված քայլերին։

Առ. ժամը 11 ու 40 ր. Բոսֆորից Մարմարա ծովն անցաւ հէլլենների այրի թագուհին «Ալմազ» զրօսանաւով։

Պարիզ.—«Տան» լրագիրը հաստատում է, որ Ֆրանսիան և Անգլիան միանգամայն կը պաշտպանեն Ռուսաստանին Կ. Պօլիս հրաւիրված զինուորական միսսիայի հարցում, որ ինքնին հանդիսանում է միջազգային «Ռուսաստանի համար՝—ասում է լրագիրը,—նեղուցները գերմանցի գեներալի ձեռքը յանձնելը Պարիզի պայմանագրի պայմաններից էլ վատթար է»։ Այդ պատճառով լրագիրը խորհուրդ է տալիս ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ այդ տեսակ դրութիւնից խուսափելու համար։ «Հարկաւոր չէ,—աւելացնում է լրագիրը,—միջազգային տալ ռուս-գերմանական բնաւորութիւն, այլ հարկաւոր է բողոքել բացառապէս Բ. Դրան դէմ»։

Միևնոյն ժամանակ «Տանը» ցաւում է, որ ֆրանսիական դիպլոմատիան սկզբից չը նախազգուշացրեց, որպէսզի ֆրանսիական դրամատունը աւանս չը տար Թիւրքիային։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

Սկօպլէ.—Հիւսիսային ալբանական սահմանը որոշող միջազգային մասնաժողովը համաձայնութեան չեկաւ Պրիզրէնի և Լիւմի շրջանների միջև սահմանային գիծ անցկացնելու վերաբերութեամբ և դադարեցրեց իր աշխատանքները մինչև գարուն։ Ռուս, ֆրանսիացի, գերմանացի և անգլիացի պատգամաւորները Սկօպլէի վրայով մեկնեցին Բելգրադ։

—

Բուխարեստ.—Պալատը միաձայն հաւանութիւն տուեց նոր Դոբրուջի միացմանը։ Քուէարկութեան հետեւանքը ընդունվեց բուռն ծափահարութեամբ։

—

Հռոմ.—Ֆլորէնտինի պատկերասրահը, ուր ցուցադրված է՝ խիստ հսկողութեան ներքոյ «Զիօկոնդա» պատկերը, դեկտեմբերի 1-ին այցելեցին 30,000-ից աւելի մարդ։

—

Լոնդոն.—Լոյս երկուշաբթի գիշերը տեղի ունեցան ողմկալի տեսարաններ սուֆրաժիստուհիների ցոյցերի առիթով, որոնց քաղաքային վարչութիւնը մերժեց վարձով տալ հասարակական ինքնավարութեան դահլիճը։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներ գործադրեց ցուցարարների դէմ։ Լրջօրէն ոչ ոք չը տուժեց։ Ձերբակալվեցին մի քանի մարդ։

Սուֆրաժիստուհիները Պանկհերստի ձերբակալութեան վրէժը լուծելու համար հրդեհեցին Դէվոնպօրտի փայտի պահեստները։ Վնասը 12,000 ֆունտ է։

—

Վիէննա.—Աւստրիական պատգամաւորութիւնը ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն։

—

Վաշինգտոն.— Ծովակալ Ֆլէտչերը հեռագրում է, որ Տամպիկոյի ռմբակոծութիւնը դադարեց։ Ապստամբները դուրս են քշված քաղաքից։ Ֆեդերալիստները ստացան նոր օգնութիւն։ Դեռի վրա կանգնած են մէկսիկական 4 ռազմանաւ։ Ամերիկական նաւատորմի բժիշկները աշխատում են հիւանդանոցում, ուր գտնվում են 200 վիրաւորված մէկսիկացիներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

—

Ալ. Քալանթարի անուան հիմնվելիք ֆոնդի օգտին ստացանք Արշակ Քալանթարից, Յարութիւն Պահլաւունուց և Վ. Պետրովից՝ ի յիշատակ նորերս վախճանված Աղասի Պահլաւունու—50 ռուբլի։

—

«Մշակի» № 269-ում յիշատակվեց՝ մի խումբ շրջվանաբնակ հայերի շրջանում հաւաքված 30 ռուբլու մասին, որպիսի դումարը նուիրատուները ցանկութիւն էին յայտնել Ալ. Քալանթարի յիշատակը յաւերժացնելու համար հիմնվելիք ֆոնդին յատկացնել։

Յիշեալ գումարը հանգանակվել է հետեւեալ անձանց շրջանում.

Ա. Ղորղանեանց 5 ռ., Զ. Տէր-Առաքելեան 5 ռ., Բ. Դաւթեանց 5 ռ., Խ. Յովսէփեանց 3 ռ., Ս. Նալբանեան 2 ռ., Ա. Յակոբեանց 2 ռ., եղբարք Զանեաններ 5 ռ., Բ. Մելիք-Մելքոնեանց 1 ռ., Յ. Յովակիմեանց 1 ռ., Մ. Ղորղանեանց 1 ռ.։ Ընդամենը 30 ռուբլի։

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Դեկտեմբերի 1-ին նշանակված էր Մարսէյլում յայտնի թիւրքահայ քաղաքական և գրական գործիչ և «Արմէնիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալեանի յօբելեանի տօնախմբութիւնը։

Սակայն այդ տօնախմբութիւնը, որ ուրիշ հանգամանքներում և պայմաններում կարող էր համազգային բնաւորութիւն ստանալ, անցաւ բոլորովին անկատելի, գոնէ մեր ռուսահայերիս մէջ։

Ինչու՞ այդպէս պատահեց։

Այդ երեւոյթը բացատրելու համար մենք մի քանի խօսք կը կամենայինք ասել։

Անկասկած, Մկրտիչ Փորթուգալեանը մի բազմամատակ և հայ ազգի վրա երախտիք ունեցող գործիչ է. նա ոչ միայն աշխատել է, գործել է, այլ և մեծ նեղութիւններ և չարչարանքներ է կրել թիւրքահայ ժողովրդի ազատագրութեան համար. նա հայկական հարցի առաջաւոր ռահվիրաներից մինն է։ Նրա գործունէութեան ծրագիրը ունէր իր բազմաթիւ կուսակիցները Թիւրքահայաստանում, այնպէս որ նոյն իսկ «արմենական» կուսակցութիւն կազմվեց, որ և գործեց երկար տարիներ։

Մայր երկրում գործելուց յետոյ Փորթուգալեանը ստիպվեց աստանդական լինել և ապաստանել Ֆրանսիա, ուր նա 29 տարիներից ի վեր հրատարակում է «Արմէնիա» թերթը, որ անշուշտ իր պատուաւոր տեղը գրաւելու է հայ մամուլի պատմութեան մէջ։

Սակայն, ինչպէս յաճախ պատահում է,

որ սխալական մարդիկ սխալներ են գործում, նոյնը պատահեց և Մկրտիչ Փորթուգալեանին։ Նա 1908 թ. մի այնպիսի սխալ քայլ արեց, որ, կարելի է ասել, ինքը մի անգամից խաչ դրեց իր գործունէութեան վրա. այդ թէ՛ն նա մերացաւ «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութեան հետ և նրա հետ միասին դաշնակցեց «Իթթիհադի» կամ «երիտասարդ-թիւրքերի» կուսակցութեան հետ։ Եւ, կատարելով այդ սխալ քայլը, կորցնելով իր բարոյական-հոգևոր անկախութիւնը, կորցնելով իր անկախ քաղաքական-նուիրիւնը հայկական հարցում, նա այնուհետև սկսեց ամեն բանի վրա նայել Դաշնակցութեան աչքով և շարժվել նրա թելադրանքներով։ Նա իր կուսակցականութիւնը այնքան առաջ տարեց, որ «Մշակի» վերաբերմամբ ևս—«Մշակի», որի հետ ամենալաւ յարաբերութիւններ էր ունեցել թէ Գ. Արծրունու ժամանակ և թէ յետոյ—մի տեսակ թշնամական դիրք բռնեց մինչ այն աստիճան, որ չը շնորհաւորեց «Մշակի» 40-ամեայ յոբելեանը, որ ստացաւ համազգային կերպարանք։

Մենք, բնականաբար, ցաւում էինք Մը. Փորթուգալեանի այդ սխալ քայլը տեսնելով, որի առաջին հետևանքն այն եղաւ, որ նա կորցրեց իր համակրութիւնը և ժողովրդականութիւնը իր մայր երկրում։

Եւ եթէ այսօր ևս նրա գործունէութեան յոբելեանը չը գրաւեց ընդհանուրի համակրութիւնը և նա չը դարձաւ համազգային տօնախմբութիւն, մենք ուրիշ պատճառ չենք տեսնում՝ քան մեր վերև յիշած երևոյթը, որ նա, Մ. Փորթուգալեանը, իր վերջին տարիների գործելակերպով կորցրեց իր անկախութիւնը և փոխանակ ղեկավարելու հասարակական կարծիքը իր սեփական ծրագրով, որով գործել էր տասնեակ տարիների ընթացքում, դարձաւ միայն հետևող մի քաղաքականութեան, որին հայ ժողովրդի ողջամիտ և գիտակից մասը չէր համակրում։

Այնու ամենայնիւ «Մշակը», ի յարգանս Մ. Փորթուգալեանի անցեալ բեղմնաւոր գործունէութեան, անկեղծօրէն շնորհաւորում է նրա յոբելեանը և կը ցանկանայ, որ հայ ժողովուրդը վարձատրէ իր բազմամեայ եռանդուոր գործչին։ Հ. Ա.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՄԵՐ ՄԷՋ

(Ներածական դիտողութիւններ)

II

Հայկական կուլտուրտրեգեր լինել—գաղափարիս բովանդակալից եւ անաղարտ իմաստով, առանց միաժամանակ ոյժեր ու ժամեր վատնելու որևէ արդիւնաբեր պաշտօնի, կողմնակի զբաղմունքի վրա—նշանակում է ունենալ հազուագիւտ առողջութեամբ օժտված օրգանիզմ, արտաքոյ կարգի ուժեղ ընտրութիւն, երկաթէ կամք՝ չարքաշ կեանքի դառնութիւնների, մուրացկի զրկանքների բովից անցնել կարողանալու համար։ Ուստի հայկական կուլտուրտրեգերութիւն ուրիշ բան չէ նշանակում, բայց եթէ կուլտուր-հասարակական մարտիրոսազրութիւն։

Մինթէ զարմանալ պէտք է այնուհետև, որ այդպիսի խորթ ու զոհաբերական պայմաններում միշտ նոսր են մնում հայկական մասաւոր-հոգեկան կուլտուրտրեգերների շարքերը։ Մինթէ դանդաղելու բարոյական իրաւունք է տրվում, հայկական մշակ գործիչներից աւելի բարձր մակարդակի հասարակական և գրական արժէքաւորութիւն սպասել, քան ունեն ու մատուցանում են նրանք։ Ի՞նչ կարող էք սպասել մի բանտեղծից, վիպասանից, դերասանից, հրապարակախօսից, երբ նրանք հարկադրված են իրանց օրերի երևի լաւագոյն ժամերը, իսկ ոյժերի ու կեանքի առնուազը կէսը նուիրել այնպիսի զբաղմունքների, որոնք ոչ մի տրամաբանական և հասարակական ֆունկցիոնել յարաբերութիւն չունեն նրանց ընտրած ու սիրած պրոֆեսիայի հետ։ Ի՞նչ կապ կայ նրանց և, ասենք, մի ուսուցչի, առևտրական հաշուապահի, դրամատան ծառայողի, տեխնիկական-վարչական այս կամ այն պաշտօնեայի միջև։ Բայց մեր մտաւորհոգեկան կուլտուրարեգերները—մեր հասարակական մտքի, արուեստի ու գրականութեան կոչումաւոր ներկայացուցիչները—ընձեռում են ամեն բան, կոչում են առաջին պատահած կողմնակի զբաղմունքի, որովհետև «հողեղէն ադամորդին» ամենից առաջ «հացիւ կեցցէ» և ապա «բանիւ»։

Կրկնում եմ, զարմանալ պէտք չէ ամենևին, երբ մեր իրականութեան անհիբընկալ փեշերի ծալքերում ոչ քանքարն է յայտնագործվում, ոչ տաղանդը զարգանում և ոչ ընդունակութիւնները կատարելագործվում։ Ամեն բան մնում է իր սաղմային վիճակում, բուդիմենտար դրութեան մէջ կամ՝ լաւագոյն դէպքում՝ թերի, կիսատ արտայայտումների ծաւալման շրջանում։

Պատանի սերունդը դեռ չը բողոքած՝ մարում, անյայտանում է խուլ անկիւններում։ Կեանքի շեմքում կանգնած երիտասարդ ոյժերը դեռ չը բեղմնաւորած՝ թաւալվում ընկնում են հոգսերի ծանրութեան անողոք հարուածների տակ։ Իսկ արդէն տարիքաւոր, կեանք մաղած գործիչների սերունդը դադար է առնում կէս ճանապարհին, մեխվում է միջակութեան մակերևոյթի վրա, փատական հնարաւորութիւն չի ունենում առաջադիմելու։

Ընդունակութիւնը, տաղանդը կարիք ունեն՝ փոքրիկ մի կան նման մանկավարժական տակտով ու խնամքով աճեցնելու, ծաւալելու եւ կատարելատիպ զարգացման հասցնելու պահանջին։

Ի՞նչ է նշանակում այս բոլորը. ուր որտեղ բացասական տխուր երևոյթի ծագման պատճառները և գոյութեան պայմանները։

Ինձ թւում է, որ միակողմանի, այսպէս ասած՝ հարևանցիօրէն է դրվում հրապարակի վրա այն հարցը, թէ ինչու հայ հասարակութիւնը չի յարգում ու գնահատում իր կուլտուրտրեգեր-գործիչներին սրանց կենդանութեան օրով և միայն ագում ու ողբում է նրանց մահվան բոպէներին։

Նախ տուգն ու ողբը, ինչպէս և ամեն սենտիմենտալիտետ (լալկանութիւն), ինքնին վերցրած, երբեք փատական գնահատութեան ազացոյց չէ, այլ սոսկ արտաքին ու ձևական մի վերաբերմունք։ Լալկանութիւնը մէկի մահվան փատի հանդէպ՝ չէ նախադրում ներքին համոզմունք ու խորագիտակցական վերաբերմունք դէպի հանգուցեալն ու նրա գործերը։ Իւրաքանչիւր գիտակցական համոզմունք, իր հերթին, նախադրում կամ նախայայտման է գնում զոհաբերութեան—այսինքն ակտիվ ու փաստական գնահատման—պատրաստակամութիւն։ Որ հարիւր-հազարաւոր աղաղակիչ լալկանները չեն ունեցել և չունեն զոհաբերական պատրաստակամութիւն դէպի տուեալ հասարակական դէմքը, այդ վկայում է հայ կուլտուրտրեգերների վիճակը կենդանութեան օրով, ինչպէս մենք օրինակներով տեսանք. այդ վկայում է նաև, նոյնքան ցայտուն կերպով, ողբասաց լալկանների փախուստն ու լռութիւնը, երբ հարց է բարձրանում գործունէութեան փշոտ դաշտում ընկած գործչի յիշատակը որևէ հանրօգուտ գործով յաւերժացնելու համար։

Ուրեմն մեզ թող չը շլացնէ ամենևին հասարակական տեսակէտից ոչինչ մխիթարական փատ չը պարունակող բազմախուռն ցաւակիցների աղաղակիչ ամբը դիակառքի շուրջը։ Մենք տեսանք դեռ երէկ, որ նոյնիսկ օրվայ պարէնը ձեռքից խլելու չափ հալածանքի ենթարկված գործիչի մահը լալկանների և կուրծք ծեծողների գտաւ հաւատարիմների շրջանում (իմա Զաւարեանի դէպքը)։ Մինթէ չափազանցութիւն է այդ բոլորից յետոյ, երբ Գր. Զալխուշեանը ամենայն իրաւամբ սոսկ լալկանների հասցէին ուղղում է «փարիսեցիներ» և «սատանաներ» որակումները...

Նշանակում է՝ հարցի ծանրակշիռ կողմը այդ չէ, այլ այն, թէ ինչու հայ հասարակութիւնը չէ պահպանում, խնամում, առաջ մղում, այլ խօսքերով՝ չէ յարգում ու գնահատում իր ազգային գործիչներին՝ սրանց կենդանութեան, անհատական ոյժերի վատնման ու սպառման շրջանում՝ յօգուտ հասարակական կոլեկտիվի։

Իսկ հարցի այդ կողմը շատ լուրջ է ու խորը իր պատճառներով։ Մեզանից ամեն մէկը կարող է մատնացոյց ու բօպէական զայրոյթով իր բարոյական պարսաւանքն ուղղել եռանդ սպանող ու տաղանդ խորտակող հասարակութեան քար անտարբերութեան հասցէին։ Սակայն դրանով անկարելի է օբիեկտիվ հարցադրդռութեան բաւարարութիւն տալ։ Մնդիրը հրապարակ է նետվում տարերային ուժգնութեամբ, որպէս հասարակական պրօբլեմ, և պահանջում հրապարակախօսից կամ հասարակագէտից իր քննական վերլուծութիւնը սպառեցուցիչ եղրների մէջ։

Հայ ազգային կոլեկտիվի վերաբերմունքի եղանակը դէպի հայ հասարակական անհատականութիւնը չէ կարելի կղզիացնել և դիտողութիւնների նիւթ դարձնել նեղ սահմանագծերի մէջ։ Հասարակական այդ պրօբլեմը՝ իր գենետիք հիմքերով և կաղապարման քնոյթով՝ բղխում է հայ հասարակական օրգանիզմի գոյութեան ստատիկ պայմանների և առաջադիմութեան մղիչ ազդակների — հայ ազգային-հասարակական կեանքի իրական յարաբերութիւնների—դասաւորութեան ծոցից։

Հայ կուլտուրտրեգերների վիճակը, օրինակ, մի մասնաւոր կողմն է առ հասարակ հայ կուլտուրայի վիճակի։ Ներելի է միթէ մասնաւորը զատել ընդհանուրից և առանձին դիտողութիւնների առարկայ դարձնել նրա տուեալ կացութեան պատճառական հիմքերը։ Հայ կուլտուրան այլ բան չէ, բայց եթէ հայ ազգային արժանիքների և պատմական ստացուածքների համագումարը. իսկ հայ կուլտուրտրեգերները կազմում են միայն անօնևատրեալ (personell) ներկայացուցիչները ազգային կուլտուրայի։ Բնական է, ուստի, որ հայ հասարակութեան վերաբերմունքի եղանակը՝ դէպի իր ազգային գործիչներն ու գրողները՝ ըստ ինքեան բղխում է այն վերաբերմունքից, որ ունի նա դէպի իր ազգային կուլտուրան։ Դորօնիշների գնահատութեան հարցը՝ հասարակական կոլեկտիվի կողմից՝ պէտք է ընկալ հրաժեշտորէն հետևցնել ազգային կուլտուրայի գնահատութեան հարցից։ Ինչու չէ յարգում ու գնահատում հայ հասարակութիւնը իր գործիչ մշակներին. այս հարցին լրիւ ու գոհացուցիչ պատասխան տալու համար, անհրաժեշտ է նախ քննականօրէն լուծել այն կարդինալ պրօբլեմը, թէ ինչու հայ հասարակութիւնը չէ յարգում ու գնահատում իր ազգային կուլտուրան։

Ահա այս բազիսի վրա պէտք է դնել խնդիրը հրապարակով։

B. Intimus

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Զաքաթալա, 28 նոյեմբ.

Անշուշտ «Մշակի» ընթերցողները կը յիշեն, որ ներկայ տարվայ Զատկի երկրորդ օրը մեր քաղաքում մի ցաւալի դէպք պատահեց, այն է՝ շրջանիս դատարանի գործավար Նիկոլայ Լեօվշինը զնդակի երկու հարուածով օրը ցերեկով սպանեց կառքի մէջ իր մտերիմ ընկեր՝ Զաքաթալայի բանտի բանտապետի օգնական Օլիմպի Դէվլետ-կիսին։

Այլ և յայտնի է ընթերցողներին, որ հանգուցեալը թէև ընտանիքի ու երեխաների տէր՝ թոյլ էր տուել իրան բացարձակ սիրային յարաբերութեան մէջ մտնելու իր մտերիմ ընկեր Լեօվշինի կնոջ հետ։

Ահա այսօր այդ գործն էր քննվում այստեղ Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում։ Մեղադրեալը ինքն էր պաշտպանվում. վկաների հարց ու փորձից յետոյ, դատարանը դատապարտեց Լեօվշինին 3 տարվայ բանտարկութեան, որոշելով միջնորդել Թագաւոր Կայսրի առջև՝ այդ վճիռը փոխել և ենթարկել ոճրագործին 6 ամսեայ բանտարկութեան առանց իրաւունքների զրկման։ Այրիի ու որբերի օգին դատարանը վճռեց ամսական 20 ր. Լեօվշինի կայքից կամ ռոճիկից։

Սօյղատ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Նոյեմբերի 30-ին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում քաղաքագլխի պաշտօնակատարի նախագահութեամբ կայացաւ քաղ. վարչութեան, դումայական մասնաժողովների անդամների, առանձին հրաւիրված մի քանի մասնաւոր անձանց և քաղաքային հողաչափերի, ինժենէրների և տեխնիկների միացեալ խորհրդակցութիւնը պօլիտեխնիկումի առիթով։ Նախագահը հակիրճ զեկուցեց վերջերս պօլիտեխնիկումին վերաբերեալ տեղի ունեցած դէպքերի մասին և հաղորդեց պօլիտեխնիկումի արուարձանի նախագիծը։ Առաջին հարցը տրվեց թէ ինչ կերպ կարելի է մեծ ծաւալով նուէրներ ձեռք բերել։ Գալստեանը առաջարկեց դիմել առանձին ունեոր անձանց։ Ոմանք առաջարկում են այդ նպատակով մասնաժողով ընտրել։ Էնֆիաճանը և Մելիք-Վիշը ապացուցանում են, որ անհրաժեշտ է օր առաջ վաճառքի հանել Դաւթլուղի հողաբաժինները, որոնք մերձ են ապագայ պօլիտեխնիկումի տեղին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, ի նկատի ունենալով որ պօլիտեխնիկումի կառուցումը ֆինանսական տեսակէտից ապահովված է, հարցը հանվում է հերթից։ Խորհրդակցութեան մնացած մասը նուիրվեց պօլիտեխնիկումի արուարձանի բարեկարգութեան հարցին և հողաբաժինների վաճառմանը. ընտրվեց յատուկ մասնաժողով, որ զբաղվելու է քաղաքային վարչութեան հետ միասին։

◆ Ամեն օր քաղաքային վարչութեան մէջ ստացվում են յայտարարութիւններ՝ վաճառելու պօլիտեխնիկումի արուարձանի հողաբաժինները։ Այդպիսի յայտարարութիւնների թիւը արդէն մօտ 3000-ի է հասել։

◆ Կովկասի փոխարքային ներկայացաւ Բարձրագոյն Պալատի կամէր-ինկէր իշխան Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Կովկասի փոխարքան յատուկ մասնաժողով է հաստատել Կովկասում տուբերկիւլոզի զարգացման խնդրով զբաղվելու համար։ Մասնաժողովի մէջ մտնում են քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, Մ. Աթաբէգեան, Գ. Ալիբէգեան և այլն։

◆ Երէկ Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը կոմսուհի Ելիզաւետա Անդրէեվնայի հետ կառքով զբօսանք կատարեց Գոլովինսկի պրոսպէկտի վրա։

◆ Թիֆլիսում, դեկտեմբերի 15-ին կայանալիք սառցաբանական VII համագումարի առիթով արդէն սկսել են ստացվել էքսպոնատներ։ Խարկովի սառցաբանական ընկերութիւնը հաղորդագրել է համագումարի կազմակերպիչ մարմնին, որ նա Թիֆլիս է ուղարկում իբրև ներկայացուցիչ ինժ. Ն. Ի. Պոնոմարեվին առանձին զեկուցումով, որ կրում է «Սառցաբանական գործը Խարկովում և նոյն տեղի ծածկած շուկան»։ Բաթումից ներկայացուցիչներ են լինելու քաղաքագլխի պաշտօնակատար Ե. Կրենիցկին և անատարոյժ Լ. Զիմենկովին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ ասել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է Կոստանդին Միք. Ալիխանեանից, ի յիշատակ նրա հանգուցեալ կնոջ՝ Նադեժդա Ալիք. Ալիխանեանի, 1000 ր. յօգուտ Ընկերութեան ընդհանուր կարիքների։

◆ Թիֆլիսի ժուրնալիստների ընկերութեան կազմակերպած գրական դասը Արցիբաշեվի «Սանդ» պիէսի հերոս Սերգէյ Պետրովիչի նկատմամբ, որ տեղի ունեցաւ Ժողովրդական Տանը, դեկտ. 2-ին, մեծաքանակ հասարակութեան ներկայութեամբ, դուրս բերեց արդարացման վճիռ Սերգէյ Պետրովիչին։ Երդուեալ ատենակալների թիւն էին 6 կին և 6 տղամարդ։

◆ Շաբաթ, դեկտ. 7-ին, Հասարակական Ակումբում Մ. Բերբերեանը ռուսերէն խօսելու է Ս. Նազարեանի և նրա ժամանակի մասին։

◆ Դեկտ. 9-ին Ժողովրդական Տանը լինելու են դասախօսութիւններ «Մարդու անձի դերը պատմութեան մէջ» թեմայով։

◆ Շրջանային զինուորա-անասնաբուժական տեսուչ Լիսիցինը մեկնեց ծանօթանալու զօրամասերի անասնաբուժական-սանիտարական դրութեան հետ։

◆ Կիրակի, դեկտ. 1-ին, օրգնաց Սէրգօվը Դիդուբէ քաղաքամասում կատարել է աղօթ թափէք «Ծարամանով»։ Երրորդ անգամ օգնացաց թռել է մի տիկնոջ հետ։

◆ Նոյեմբեր ամսվայ ընթացքում Թիֆլիսում ամենասաստիկ տարածված հիւանդութիւնը քութէշն էր։

◆ Թիֆլիսի մօքսաքաղ Ի. Մանուէլեանը խոստացել է ամեն տարի 120 ր. նուէրել յօգուտ պօլիտեխնիկումի։

◆ Դեկտ. 6-ին լրանում Աւ. Արասխանեանի թաղման տարելիցը։ Գերեզմանի վրա այդ օրը կատարվելու է հոգեհանգիստ։

◆ Խարկովում կոչված քաղաքամասում դեկտ. 8-ին բացվելու է հասարակական արկումը։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարի առաջին երեսի վրա Վերջին տեղեկութիւններ բաժնում սպրդել է հետևեալ սխալը. շարված է «Այլ և այլ նկատողութիւններ» վերնագիրը, մինչդեռ պէտք է լինէր՝ «Այլ և այլ նորութիւններ»։

յոգնել էի, ուստի ներողութիւն խնդրելով, բարձրացրի նստարանի մէջքը, վեր ելայ և պառկեցի։

Օրը դեռ ցերեկ էր։ Գնացքն ընթանում էր վերին ատիճանի զանգաղ, անագին դղրդոցով և հարուածներով, ամենայն բարեխղճութեամբ պահպանելով ռուսական երկաթուղիների սրբազան աւանդութիւնը—երբէք չը շտապել և երբէք հանգիստ չը տալ ճամբորդների ոսկորներին։

Զանցաւ քառորդ ժամ, իմ ուղեկիցներն արդէն բաւական ընտելացան իրարու։

Առաջին առիթ տուողն եղաւ Ջինարլիէն ուղղակիցս։

Նա ասաց.

— Թոյլ տուէք, պարոններ, ներկայանալ. Արկադիյ Մարիովիչ Ալթունովն։

— Սպիրիդոն Միրօնովիչ Տարաշչենկո,—արտասանեց բարակ տենօրով կարճահասակ և գէր սպան։

Եւ, տաքի եկնելով, տեղմեց Ալթունովի ձեռքը։

— Իլլարիոն Սերաֆիմովիչ Պոստուխով,—կատարելապէս մռնչաց երկայնահասակ և նիհար սպան բասը ձայնով։

Եւ, առանց տեղից վեր կենալու, մեկնեց Ալթունովին իր նեղ ու երկայն ձեռը։

— Շատ ուրախ եմ,—շարունակեց Արկադիյ Մարիովիչ Ալթունովը մաքուր ռուսերէնով, թէև կովկասեան արտասանութեամբ և առոգանութեամբ։—Պարոններ, պէտք է ձեզ ասել, որ աշխարհի երեսին չը կայ աւելի ձանձրալի ճամբորդութիւն, քան այն, որ մենք կովկասցիներս ստիպված ենք անել ատուածատան Անդրկովկասի երկաթուղով։

Եւ իսկոյն հաստատեց, թէ ինչու է ձանձրալի։

Գնացքն ընթանում է ինչպէս թուրքի ճռճռան սայլ, իսկ փառաբանված կովկասեան ընութիւնը աչքի առջև է։ Տեսէք դաշտերն ու ձորերը չորացած, սարերը մռայլ, մոխրագոյն։ Անկիւն չը կայ, ուր հանդստանայ դեղասէր ճամբորդի հայեացքը։ Մի խօսքով, ձանձրոյթ։ Բայց, որ ամենագլխաւորն է, բուֆէտները սոսկալի են, օրինաւոր ուտելու ու խմելու բան չունեն։ Ահա այդ ձանձրոյթի դէմ Արկադիյ Մարիովիչ Ալթունովը միշտ իր հետ վերցնում է «պէս-պէս դեղեր»։ Կարճ ասած, բարեհաճեցէք նրա հետ մի թեթև նախաճաշ անել։

Նա վերցրեց վերին ցանցի վրայից մի գեղեցիկ զամբիւղ, բաց արաւ և նրա միջից դուրս բերեց մի քանի շիշեր և զանազան ուտելիքներ։

Ես ոչ ախորժակ ունէի և ոչ ցանկութիւն ջնտրմէնի սեղանին մասնակցելու, ուստի ինձ ձեռցրի քնած։

Նիհար և երկայնահասակ Պոստուխովը ինչ որ մրմրթաց քթի տակ, իսկ նրա ընկերոջ լայն ու կարմիր երեսն աւելի լայնացաւ և փայլեց ներքին հաճոյքից։

— Ինչու չէ, կարելի է,—ասաց նա իր տեղն ուղղելով և ընչացքը շփելով կարճ և ուռած մատներով, որոնք ծածկված էին սև մազերով։

— Կոնեակը Մարտինի է, լաւագոյն մարկայի,—շարունակեց Ալթունովը, մի առ մի ուտելիքները տեղաւորելով լուսամուտի առջևի ծալովի սեղանիկի վրա։—Ասում են՝ սովորոյթն երկրորդ բնոյթ է։ Ինձ համար նա առաջինն է։ Խմել, արդէն լաւը խմել, եթէ ոչ—չարժէ։ Այնպէս չէ, գնդապետ,—դարձաւ նա Տարաշչենկոյին։

— Ի հարկէ,—հաստատեց լայնարան սպան, հազալով և ձեռները իրարու շփելով, որպէս հանելի ու սրբազան պարտականութիւն կատարելու պատրաստվող մէկը։

— Իսկ գինին,—շարունակեց Ալթունովը,—սեան ընութիւնը աչքի առջև է։ Տեսէք դաշտերն ու ձորերը չորացած, սարերը մռայլ, մոխրագոյն։ Անկիւն չը կայ, ուր հանդստանայ դեղասէր ճամբորդի հայեացքը։ Մի խօսքով, ձանձրոյթ։ Բայց, որ ամենագլխաւորն է, բուֆէտները սոսկալի են, օրինաւոր ուտելու ու խմելու բան չունեն։ Ահա այդ ձանձրոյթի դէմ Արկադիյ Մարիովիչ Ալթունովը միշտ իր հետ վերցնում է «պէս-պէս դեղեր»։ Կարճ ասած, բարեհաճեցէք նրա հետ մի թեթև նախաճաշ անել։

Նա վերցրեց վերին ցանցի վրայից մի գեղեցիկ զամբիւղ, բաց արաւ և նրա միջից դուրս բերեց մի քանի շիշեր և զանազան ուտելիքներ։

Ես ոչ ախորժակ ունէի և ոչ ցանկութիւն ջնտրմէնի սեղանին մասնակցելու, ուստի ինձ ձեռցրի քնած։

Նիհար և երկայնահասակ Պոստուխովը ինչ որ մրմրթաց քթի տակ, իսկ նրա ընկերոջ լայն ու կարմիր երեսն աւելի լայնացաւ և փայլեց ներքին հաճոյքից։

— Ինչու չէ, կարելի է,—ասաց նա իր տեղն ուղղելով և ընչացքը շփելով կարճ և ուռած մատներով, որոնք ծածկված էին սև մազերով։

— Կոնեակը Մարտինի է, լաւագոյն մարկայի,—շարունակեց Ալթունովը, մի առ մի ուտելիքները տեղաւորելով լուսամուտի առջևի ծալովի սեղանիկի վրա։—Ասում են՝ սովորոյթն երկրորդ բնոյթ է։ Ինձ համար նա առաջինն է։ Խմել, արդէն լաւը խմել, եթէ ոչ—չարժէ։ Այնպէս չէ, գնդապետ,—դարձաւ նա Տարաշչենկոյին։

— Ի հարկէ,—հաստատեց լայնարան սպան, հազալով և ձեռները իրարու շփելով, որպէս հանելի ու սրբազան պարտականութիւն կատարելու պատրաստվող մէկը։

— Իսկ գինին,—շարունակեց Ալթունովը,

նաւանդ որ սովոր չեմ երկրորդով ճամբորդելու։

Եւ մի անգամ ևս ծխի քուլաները բաց թողնելով գլխից վեր՝ աւելացրեց.

— Զը գիտեմ ի՞նչ իրաւունքով այդ պարոնները վերցնում են երրորդ կլասի տոմսակ և ճամբորդում են երկրորդով։

Ներս մտան մեր ուղեկիցները, մի մի հրացան ձեռներին։ Ըստ երևոյթին, նրանք որսի էին գնում։

Արտաքուստ երկու հակատեղարներ էին։ Մէկը երկայնահասակ էր, նիհար, շվահեր, փոքրիկ քթով, որի վերին մասը տակակ էր, իսկ ծայրը խոշոր սխտորի պէս դուրս ցցված։ Նրա երեսը սերկեվիլի գոյն ունէր։ Միւսը փոքրահասակ էր, թուխ աչքունքով, գէր, առողջ, կարմիր այտերով և հատ շրթունքներով։ Կարելի էր ասել, որ բնութիւնը մոռացել է նրանց կանխապէս ձուլել, երկու հաւասար մասերի բաժանել և այնպէս ուղարկել աշխարհ։

Ես կարծեցի, որ ուղեկիցս իսկոյն որևէ կերպ կարտայայտի իր արհամարհանքը դէպի զինուորականները կամ գոնէ կը լռէ։

Պատահեց հակառակը։

— Ախ,—գոչեց նա, տաքի եկնելով,—նեղրեցէք, գուցէ ես ձեր տեղն եմ բռնել։ Բարի եղէք ընտրելու ձեր ցանկացած կողմը։

Կարճահասակ և գէր սպան բարեսիրտաբար ժպտաց և ասաց.

— Մի՛ անհանգստանաք, մենք շատ էլ հեռու չենք գնում։

Երկայնահասակ և նիհար սպան, տեղաւորելով իր հրացանը քթիս տակ, մի սառը, դրեթէ թշնամական հայեացք ձգեց նախ ինձ, ապա ուղեկցիս վրա։ Նրա աչքերը կլոր էին, փոքրիկ, ապակենման։

Նա նստեց իմ մօտ և, ոտներն առաջ ձգելով, վեր քաշեց կօշիկների երկայն վզերը։

Ես, ամբողջ օրը դէս ու դէն վազվզելով, նա շիկ համարեց աւելացնել երկու-երեք ռուսական յիշոցներ, որոնք, սակայն, շատ էլ թունդերից չէին։ Մարդը, երևի, սովոր էր անպատճառ վիրաւորել օգնականներին սոսկ այն պատճառով, որ վարձատրում է նրանց քրտինքը։

Տեղաւորելով իրերը, նա բատխատեայ թաշկինակով սրբեց նեղ ու մսալի ճակատը ու նստեց դիմացի նստարանի վրա։ Ապա դուրս բերեց զրպանից մի մեծ արծաթեայ տուփ, որ ծածկված էր բազմաթիւ ոսկեայ և ադամանդեայ մենագրերով, վերցրեց մի ծխախոտ, զարկեց նրան մի քանի անգամ մատնդտուփի կողմով տուփին, որպէսզի դուրս թափվի փոշին, և վառեց մեխանիկական հրատուփից։

— Հեռու էք բարեհաճում գնալ,—հարցրեց նա ինձ ռուսերէն, ծխախոտի առաջին ծուխն արձակելով գլխիս վեր, որպէսզի երկրորդն երեսովս տայ։

— Մօսկվա։

— Նախանձում եմ։

— Ինչու։

— Մօսկվան ես շատ եմ սիրում, աւելի քան Պետերբուրգը։ Բարի և հիւրասէր քաղաք է։ Այնտեղ կարելի է ապրել մարդավարի։ Եթէ գործերս ներէին, կը գայի ձեզ հետ։ Բայց, ասացէք խնդրեմ,—շտապեց նա աւելացնել,—բացի մեզնից էլի ճամբորդներ կա՞ն այս կուպէում։

Ես ասացի, թէ կան երկու ռուս սպաներ, որոնք դրսումն են և, երևի, շուտով ներս կը մտնեն։

— Ահ,—գոչեց ուղեկիցս, ձեռն արհամարհանքով թօթափելով օդի մէջ,—ես զինուորականներին առում եմ։ Նրանք սիրում են ընդհարումներ։ Եթէ գիտենայի ուրիշ կուպէ կը մտնէի։ Բայց փոյթ չէ. հետևեալ կայարանում կանցնեմ առաջին կլաս, մասնաւորապէս որ սովորական տոմսակ ունեմ։

Ես մի անգամ ևս ծխի քուլաները բաց թողնելով գլխից վեր՝ աւելացրեց.

— Զը գիտեմ ի՞նչ իրաւունքով այդ պարոնները վերցնում են երրորդ կլասի տոմսակ և ճամբորդում են երկրորդով։

Ներս մտան մեր ուղեկիցները, մի մի հրացան ձեռներին։ Ըստ երևոյթին, նրանք որսի էին գնում։

Արտաքուստ երկու հակատեղարներ էին։ Մէկը երկայնահասակ էր, նիհար, շվահեր, փոքրիկ քթով, որի վերին մասը տակակ էր, իսկ ծայրը խոշոր սխտորի պէս դուրս ցցված։ Նրա երեսը սերկեվիլի գոյն ունէր։ Միւսը փոքրահասակ էր, թուխ աչքունքով, գէր, առողջ, կարմիր այտերով և հատ շրթունքներով։ Կարելի էր ասել, որ բնութիւնը մոռացել է նրանց կանխապէս ձուլել, երկու հաւասար մասերի բաժանել և այնպէս ուղարկել աշխարհ։

Ես կարծեցի, որ ուղեկիցս իսկոյն որևէ կերպ կարտայայտի իր արհամարհանքը դէպի զինուորականները կամ գոնէ կը լռէ։

Պատահեց հակառակը։

— Ախ,—գոչեց նա, տաքի եկնելով,—նեղրեցէք, գուցէ ես ձեր տեղն եմ բռնել։ Բարի եղէք ընտրելու ձեր ցանկացած կողմը։

Կարճահասակ և գէր սպան բարեսիրտաբար ժպտաց և ասաց.

— Մի՛ անհանգստանաք, մենք շատ էլ հեռու չենք գնում։

Երկայնահասակ և նիհար սպան, տեղաւորելով իր հրացանը քթիս տակ, մի սառը, դրեթէ թշնամական հայեացք ձգեց նախ ինձ, ապա ուղեկցիս վրա։ Նրա աչքերը կլոր էին, փոքրիկ, ապակենման։

Նա նստեց իմ մօտ և, ոտներն առաջ ձգելով, վեր քաշեց կօշիկների երկայն վզերը։

Ես, ամբողջ օրը դէս ու դէն վազվզելով,

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— Քաղաքային սանիտարական մասնաժողովները շուկաների քաղաքամասերի պրիստաւների հետ ամեն օր շրջագայում են շուկաները և երեան հանում սանիտարական խախտումներ, կազմելով արձանագրութիւններ խախտողների դէմ։

✦ Շուրջկաները քաղաքի զանազան մասերում շարունակվում են։

✦ Վառարանները սաստիկ վառելուց հրդեհների դէպքերը կրկնվում են։

✦ Դեկտ. 1-ի գիշերը «Ռուսաց ակումբում» կալանաւորվել է ոմն Երմօլայ Դաւ. Տուրաբէլիձէ, որ անգործ է և ապրում է Միքայէլեան փող. № 122 տանը։ Կալանաւորվածը լօտոյի թղթերի համարները կեղծելով շարունակ տանելիս է եղել։ Երբ նրան ձերբակալեցին ոստիկանութեան օգնութեամբ, նրա մօտ գտնվեցին մի քանի «Հալաբարի հասարակական ակումբի» լօտոյի թղթեր։ Տուրաբէլիձէն բացատրեց, որ ռուսաց ակումբում լօտոյի թղթերը կեղծ համարներով ինքը գնեց խաղալու ժամանակ, իսկ Հալաբարի ակումբի լօտոյի խաղաթղթերը չէ կարողացել վերադարձնել. մի քան մի մօտը պահում է։

✦ Դեկտեմբերի 1-ին, Արշալոյս Բարաչանեանը, 16 տարեկան, որ ապրում է Հալաբարի փող. № 15 տանը, սխալմամբ վերիսանական կաթէլների տեղ խմեց նաշադիրի սպիրտ։ Թունաւորվածին տարան Արամեանի հիւանդանոցը, ուր բժիշկները նրա կեանքը գտան վտանգից զերծ։

✦ Դեկտեմբերի 1-ին, Թիւրքանպատակ Վահան Բաղդասարեանը էլեկտրաքարի № 134 վագոնի կօնդուկտոր Կնանտուրայի (№ 9) պատճառով, որ չը կանգնեցրեց վագոնը և ստիպեց Բաղդասարեանին թռչել վագոնից, ընկաւ քարերի վրա և ստացաւ ջարդուածքներ դէմքից, ձեռքից և կոտրեց առաջի 4 ատամը։ Վիրաւորին ցոյց տրվեց բժշկական օգնութիւն։

✦ Դեկտեմբերի 2-ին, Երեկոյեան, Դուշտսկի նրբանցք № 4 տանը թիֆլիսեցի Ալեքսէյ Կօրօլեվը, 66 տարեկան, անձնասպանութեան նպատակով խմեց նաշադիրի սպիրտ։ Թունաւորվածին օգնութիւն հասցրեց շտապոյթ կառքով եկած բժիշկը։ Կեանքին վտանգ չէ սպառնում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄՕԼԻԷՐԻ «ԴՕՆ-ԺՈՒԱՆԸ» ՀԱՅ ԹԵՄԻ ՎՐԱ

Ներկայ հայ թատրոնական սեզօնը տարաբախտ ինքնուրոյն նոր ոչինչ չէ տուել մեզ, եթէ ի նկատի չառնենք «Հին-Աստուածներն» ու «Զար ոգին», որոնք ներկայ սեզօնի համար նորութիւն չեն ներկայացնում։ Ցիրաւի աչքի է ընկնում այն ծայրայեղ աղքատութիւնը, որ տիրում է մեր թատրոնական նորագոյն բեմերտարի մէջ. ոչ հին զրոնեերն են հանդէս գալիս որևէ նոր ստեղծագործութեամբ և ոչ էլ երիտասարդ ոյժեր են երևում հրապարակի վրա։

Բայց այդ երևոյթի հետ աչքի է ընկնում և մի այլ երևոյթ, որը պակաս դեր չէ խաղում մեր թատրոնական գործի ապագայի տեսակէտից։ Բայց սխալ ասացինք. ոչ թէ ապագայի, այլ հէնց ներկայի տեսակէտից։ Դա՝ գործի կազմակերպչական կողմն է։ Ըստ երևոյթին, գործը այդտեղ շատ է կաղում. որովհետև ոչ բեմերտարն է ըստ ամենայնի բաւարար կազմված և ոչ դերատանական ոյժերն են լրիւ համախմբված։ Ներկայ թատրոնական սեզօնին գոնէ այդ տպաւորութիւն ենք մենք ստացել։ Կարծէք թատրոնական գործը ինչ-որ տարօրինակ կղզեացման է ենթարկվել։ կարծէք նա ոչ մի հմայք չունի իր մէջ, որով ընդունակ լինէր իր շուրջը համախմբելու գեղարուեստը սիրողներին ու նրա բարգաւաճման նախանձախնդիրներին։ Թւում է, թէ Ընաւելի ու աւելի ոգեորվելով,—Ուդենից Վեզմօսոսի գինիներից է։ Ճշմարիտ է, շատ հներից չէ, ընդամենը հինգ տարվայ, բայց կը հաւանէք, յուսով եմ։ Այս տեսակ գինի ամեն մարդ չէ կարող ունենալ։ Պէտք է ասած, առանց պարծենալու, որ Ուդենի Վեզմօսոսի կառավարիչն իմ ամենամտերիմ բարեկամներից է։ Երբեմն նա ինձ ուղարկում է յատկապէս Մեծ Իշխանների համար պարտասած գինիներից մի քանի դիւժին։ Ես էլ, ի հարկէ, պարքի տակ չեմ մնում։ Ահա խաւեար, Ռօքֆօր պանիր, անչուս, կիլիկ, գանազան ապխտած ձկներ։ Գնդապետ,—դարձաւ նա Տարաշչենկոյին,—առաջին խօսքը ձեզ է պատկանում։

— Դուք ինձ շարունակ գնդապետ էք անուանում, բայց ես միայն կապիտան եմ,—ուղղեց նրա սխալը Տարաշչենկոն։

Եւ ընդունելով կօնեակի առաջին բաժակն՝ խկոյն և եթ դատարկեց։

— Համեցէք, կապիտան,—դարձաւ Ալթունօվը Պոստուխովին, առաջարկելով նրան երկրորդ բաժակը։

— Ներողութիւն, ես միայն պօրուչիկ եմ,—մրմռաց երկայնահասակը, կարծես, բարկանալով, որ իրօք կապիտան չէ։

Ես յիշեցի իմ վաղեմի մի բարեկամի խօսքը, թէ ինքը ռուս սպաների հետ խօսելիս ձեռնտու է համարում նրանց տիտղոսը մի աստիճանով աւելացնել։ Ալթունօվն իմ բարեկամից աւելի առաջ գնաց՝ իր ուղեկից սպաների աստիճանները աւելացրեց երկուսով։

— Ձեր կենացը,—առաջարկեց Տարաշչենկոն և շտապեց դատարկել սքանչելի հոտավէտ երկրորդ բաժակը։

— Ոչ, պարոններ, ոչ,—ընդհատեց Ալթունօվը,—ես համաձայն չեմ։ Մենք մի մեծ պարտք ունենք, որ չը պիտի մոռանանք, ուր որ լինենք։ Դա հայրենիքի սէրն է։ Ցանուն այդ սիրոյ ես առաջարկում եմ խմել նախ և առաջ անյաղթելի ռուս զօրքերի կենացը։

— Կարելի է,—արտասանեց պօրուչիկ Պոստուխովը այնպիսի ներողամիտ եղանակով, որ, կարծես, համայն Ռուսիայի հրամանատարն էր։

Եւ, երկայն պարանոցն աւելի երկայնացնելով, պահեց բաժակն օդի մէջ, նայեց նրան թափանցիկ և մի կումով դատարկեց։

Ըմպելիքներից յետոյ Արկադէյ Մարկօվիչ Ալթունօվը գովեց իր ուտելիքները։ Ռօքֆօրը Ֆրանսիայից յատկապէս նրա համար է բերել տրված, խաւեարն ու ապրխտած ձկները մասնաւորապէս նրա համար են պատրաստված Սալիանում։

Կօնեակի բաժակները յաջորդեցին միմեանց։ Շուտով սպաների գլուխները բաւական տաքացան դեռ գինու շիշերը բաց չարած։

— Գիտէք, ես զարմանում եմ, որ մարդիկ կարողանում են վագօնում քնել,—ակնարկեց Ալթունօվը իմ մասին։

Որ սպանէք էլ, նա ինքը չի կարող քնել։ Առ հասարակ քունը նա համարում է կէս մահ, ուստի բաւական է համարում գիշերները լուսացնել կլուբներում կամ հիւրանոցներում։ Կեանքը կարճատև է, պէտք է օգտվել նրա ամեն մի վայրկեանից։ Այնպէս չէ, գնդապետ, ներողութիւն, կապիտան։

— Բոլորովին ճիշդ էք հրամայում,—շտապեց համաձայնվել Տարաշչենկոն, մի շատ նշանակալի հայեացք ձգելով գինու փակ շիշերի վրա։

Ալթունօվը հասկացաւ նրա միտքը և շտապեց բանալ շիշերը։ Գինու առաջին բաժակն ևս նա պարտք համարեց նուիրել ռուսաց յաղթական զօրքերին։

— Դուք ապայ եղէ՞լ էք,—հարցրեց Պոստուխովը, խմելուց յետոյ սրբելով երկարութիւնը իր բոլոր մարմիններով մի որոշ պարտականութիւն է կատարում, բայց կատարում է ի պաշտօնէ։ Ստեղծագործող ոյժը միանգամայն բացակայում է։

Դառնանք վերջին ներկայացման։ Դեկտեմբերի 2-ին դերասանական խումբը բեմ էր հանել Մօլիէրի կլասիկ «Դօն-Ժուան» կօմեդիան հինգ արարուածով։

Մօլիէրը ֆրանսիական հռչակաւոր երգիծաբանն է, որ ապրել ու գրել է XVII դարում և մասամբ պատկանում է կեղծ դասական գրական ուղղութեան։ Մօլիէրը հրաշակվել է իր կօմեդիաներով, որոնցից մի քանիսը նոյնիսկ ողբերգութեան խորութիւն են պարունակում իրանց մէջ։ «Տարտիւֆի» և «Միզանտրոպի» հետ միասին նրա աչքի ընկնող կօմեդիաներից է «Դօն-Ժուանը»։ Պիէսի հիմնական նիւթը սպանական մի հին լեգենդա է՝ անբարոյական, սառորոգի ազնուական Դօն-Ժուանի մասին, որը ոչ Աստուծուց էր վախենում և ոչ մարդկանցից ամաչում։ Ամեն տեսակ անզգամութիւն նա անում էր. խաղաղ ընտանիքներից աղջիկներ էր առանգում և պարտաբոյծ կեանք վարում։ Ապա նա սպանում է ծերունի կօմանդօրին, որ կամեցել էր պաշտպանել իր առանգված աղջիկն։ Թէև Դօն-Ժուանի բարձր ատիճանը միանգամայն ապահովում էր նրա անձեռնմխելիութիւնը, սակայն վերջ ի վերջոյ նա ստանում է իր պատիժը Ցարսկոյէսկան վանականների ձեռքով, որոնք նրան սպանում են իբրև անաստուածի, իսկ ոճիրը ծածկելու համար լուր են տարածում, թէ սպանված կօմանդօրի արձանին վիրաւորանք հասցնելու պատճառով գետինը պատռվել է և մեղաւորին (Դօն-Ժուանին) ներս քաշել...

Օգտվելով այս լեգենդայից, Մօլիէրը միանգամայն ժամանակակից կօլօրիտ է տուել իր «Դօն-Ժուանին»։ Կօմեդիայի հրամանն հերոսը իսկապէս իր ժամանակի ֆրանսիական ազնուականի բոլոր յատկութիւններով է օժտված։ Դօն-Ժուանի համար նախ հոտառուն սիրոյ զգացմունքի գաղափարը միանգամայն օտար է. ստոր դաւաճանութեամբ և խաբեբայութեամբ նա մի կնոջից դէպի միւսն է վազում. նա գրաւում է Դոնա Էլվիրի սիրտը, սպանելով աղջկայ հօրը՝ կօմանդօրին, բայց կարճ ժամանակից յետոյ թողնում է նրան ու վազում ուրիշների հետևից։ Առանց խղճի խայթ զգալու, խաբված Էլվիրից յետոյ նա ընկնում է սիրահարված մի զոյգի հետևից՝ երիտասարդի ձեռքից հարստացուին խլելու նպատակով. ապա այդտեղ անաջողութեան հանդիպելով, նա իր կրքերին զոհ է ուղում դարձնել առաջին պատահած գեղջուկ աղջիկներին՝ Շարլոտային և Մատուրինին։ Դօն-Ժուանը գիտէ քաղցրախօսել, ընդունակ է այդպիսով հմայել, գրաւել կանանց սիրտը. նա բոլոր կանանց էլ կարող է հաւատացնել, որ ինքը առաջին անգամն է սիրում իւրաքանչիւրին առանձին և պատրաստ է ամիսներպէս ամուսնանալ նրանց հետ։

Այդ գրուածքի մէջ Մօլիէրը վառ գծերով պատկերացնում է իր ժամանակի ֆրանսիական ազնուականութեան բարոյական ամբողջ մնայունութիւնը։ «Դօն-Ժուանի» մէջ չէ կարելի միայն սիրային արկածներ տեսնել։ Նրանք կօմեդիայի հերոսի համար միմիայն ժամանցի առարկաներ են։ «Դօն-Ժուանի» մէջ մենք տեսնում ենք ոչ միայն բարոյապէս ընկած, այլ և նիւթապէս սնանկացած ազնուականին։ Դա այն ժամանակ էր, երբ ֆէօդալական արտօնեալ արիստօկրատիան իր հասարակական դրութեամբ շարունակ դէպի անկումն էր դիմում, իր անտեսական գերակշռութիւնը գալիք դասակարգին յանձնելով։ Սիրային արկածներով տարված, պարտաբոյծ, անգործ, անհաւատ, բայց ծաղումով արտօնեալ, բարձր դասակարգի անդամ, սեռնեկապետով ու ծառաներով շրջապատված Դօն-Ժուանը մինչև կոկորդը պարքի մէջ է խեղդված. և պարտ է... վառճառական Դիմանիշին, մի դասակարգի ներկայացուցչի, որի վրա ազնուականը միայն արհամարհանքով էր նայում։ Դօն-Ժուանը սկեպտիկ է. նա չէ հաւատում բարոյական ոչ մի սկզբունքի, բայց հաւատում է մի անբարոյական սկզբունքի. և դա այն կեղծաւորութիւնն ու սուտն է, որոնց մէջ ամբողջովին խրված է եղել այն ժամանակվայ ֆրանսիական ազնուականութիւնը՝ նշանաւոր Լուդովիկոս XIV-ի պալատից սկսած մինչև վերջին ազնուականը։

Մօլիէրը հարուածել է այդ ազնուականութեանը. նա մօտեցել է այդ միջավայրի քննադատութեանը նոր դարձնող երրորդ դասակարգի տեսակէտից։ Նոյն տեսակէտից նա մօտեցել է նաև այն ժամանակվայ մի այլ արտօնեալ դասակարգին՝ հոգևորականութեանը, որի տիպական պատկերը նա մարմնացրել է «Տարտիւֆի» մէջ։

Բայց «Տարտիւֆին» յատուկ կեղծաւորութիւնը, փարիսեցիութիւնը, սուտը օտար չեն նաև Դօն-Ժուանին։ Սիրային արկածների ու դասային դասակարգամտութեան մի շարք փայլուն նմուշներ տալուց յետոյ, Դօն-Ժուանը փորձում է շրջահայեաց լինել և հետևել «մեծամամնութեանը». կեղծաւորութիւնը,—ասում է նա,—նոր արատ է, իսկ բոլոր նոր արատները առաքինութիւն են համարվում։ Եւ նա փորձում է գնալ «առաքինի» Տարտիւֆի հետևից։

Նոյն կօմեդիայի մէջ հանդէս եկող Սգանարելի և Դօն-Լիւիսի բերանով հեղինակը խստիւ քննադատում է իր ժամանակի տիրող դասակարգի բովանդակ ինանկութիւնը, հարուածում միայն ծաղումով ու դիրքով պարծեցող ազնուականութիւնը։

Անկման պրօցէսը այդ դասակարգի սկսվել էր Մօլիէրի ժամանակ և վերջացաւ մօտաւորապէս հարիւր տարի յետոյ. ուժեղ հարուած տուողը նրան եղաւ բուրժուազիան 1789 թ-ին, երբ Տարտիւֆների ու Դօն-Ժուանների կերպարանքը միանգամայն փոխվեց, բայց փոխվեց արտաքինը, ներքին էութիւնը նոյնը պահպանելով։

Այս վերջին հանգամանքն է պատճառը, որ Մօլիէրի կօմեդիաներից մի քանիսը տակաւին չեն կորցրել իրանց այժմէութիւնը և հետաքրքրութիւն են շարժում ժամանակակիցներիս մէջ։

Ներկայացնելով Մօլիէրի այս նշանաւոր գործը, հասա՞ւ արդեօք խումբը մի որոշ դրական արդիւնքի։ Պարզապէս պէտք է ասել, որ ընդհանուր առմամբ՝ ոչ։ Ճիշդ է, տեսարաններից մի քանիսը աջողութեամբ տարվեցին, սակայն գլխաւոր դերակատարներից ոչ-մէկն էլ չը տուեց այն նրբութիւնները, որոնք յատուկ են Մօլիէրի տիպերին։

Դօն-Ժուանի դերը կատարում էր դերասան Փափազեանը։ Առաջին անգամն էինք տեսնում այդ երիտասարդ դերասանին։ Պէտք է ընդգծենք մեր ստացած առաջին տպաւորութեան հիման վրա, որ նա օժտված է որոշ ձիրքով, շնորհալի է, ունի տեխնիկական որոշ պատրաստութիւն, նը-պաստաւոր արտաքին, սակայն աչքի է ընկնում պաշարի պակասութիւնը։ Մենք չենք խօսում դերասանի ապագայի մասին, կամ ու բարակ ընչացքը, որ գարու հասկերի էր նման։

— Բաղդ չեմ ունեցել լինելու,—պատասխանեց Ալթունօվը, խորը հառաչելով։

Բայց մեղաւորը ինքը չէ, այլ հայրը։ Հանդուցեալը, ունենալով միայն մի որդի, չը կամեցաւ նրան ուղարկել պատերազմի դաշտը՝ հայրենիքի պատիւը պաշտպանելու։ Նա բարւոք համարեց, որ իր որդին էլ մնայ իր պէս սոսկ կալուածատէր և կառավարի տոհմական կալուածները։

— Ուրեմն դուք կալուածատէր էք,—հարցրեց Պոստուխովը, որ, ըստ երևոյթին, շատ անհանգիստ էր իր ուղեկցի սօցիալական դիրքի մասին։

— Այո։

— Ցուտով եմ և ազնուական։

— Մարդու ծագումը ճանաչվում է նրա վարմունքից ու ձևերից,—պատասխանեց համեստօրէն Ալթունօվը։

— Ձեր վարմունքն ու ձևերը միանգամայն ազնուականի են,—նկատեց Տարաշչենկոն, որ վաղուց էր յաւիտակվել Ալթունօվի հիւրասիրութեամբ։

Բայց ներեցէք, Արկադէյ Մարկօվիչ Ալթունօվը համեստ մարդ է։ Նա երբէք չէր խօսի իր ազնուական ծագման մասին, եթէ չը ստիպէք խօսել։ Գիտէք. պարծենալու համար չի ասում, այլ այնպէս. նրա մայրն իշխանական տոհմից է, իսկ հայրը հայկական թագաւորական ցեղից։ Այս մասին նա ունի անվիճելի փաստաթղթեր, բայց ուշադրութիւն չի դարձնում նրանց վրա, որովհետև...

— Որովհետև հայկական թագաւորական ծագումը ոչինչ արժէք չունի Ռուսիայում,—լրացրեց Պոստուխովը մի տեսակ չարախնդութեամբ։

— Մի ասէք, պօրուչիկ, մի ասէք, արժէք ունի,—ուղղեց ընկերոջ անքաղաքավարութիւնը բարեսիրտ Տարաշչենկոն, որի առանց այն էլ կակուղ սիրտը բոլորովին փափկել էլ ոգեւորից ըմպելիներից։—Ինձ յայտնի է, օրինակի համար, որ հայերը հին ազնուական ազգ են և քրիստոնէութիւնն ընդունել են մեզանից ընդամենը հարիւր տարի յետոյ։ Եթէ չեմ սխալվում, Ալէքսանդր Մակեդոնացին մայրով և ոչ ուրիշներով։ Եթէ ես պարծեցող լինէի, աւելի մտիկ անցնելով կը պարծենայի։ Օրինակի համար՝ կասէի, որ իմ հօր հայրը վրաց վերջին թագաւորի ամենասիրելի բարեկամն է եղել և մի անգամ որսի ժամանակ տասնմէկ վագր է սպանել։ Գիտէք, առաջ Կովկասի անտառներում վագրեր շատ կային։ Ռուս զօրքերն եկան թէ չէ, այդ սոսկալի գազանները փախան Հնդկաստանի խորքերը։ Եթէ հետաքրքրվում էք, բարեհաճեցէք գալ իմ դղեակը, ես ձեզ ցոյց կը տամ սպանված վագրերի մորթերը։

Ճիշդ այդպէս էլ ասաց Ալթունօվը. «դղեակ»։

— Թողնենք պատմութիւնը, այժմեանից խօսենք,—գոչեց Պոստուխովը մի փոքր զրգռված, գուցէ այն պատճառով, որ իր պապը թագաւորների հետ որսի չէ գնացել.—ես կը կամենայի իմանալ՝ այժմ դուք ինչ էք զգում ձեզ, հա՛յ թէ ռուս։

— Ես ինձ զգում եմ ծագումով հայ, ազգով ռուս,—պատասխանեց Ալթունօվը անմիջապէս։

— Այդ ինչպէս։ Ես չը հասկացայ։

— Ուզում եմ ասել, որ ես հայ-լուսաւորչական ռուս եմ։

— Շատ լաւ, բայց յեղափոխակա՞ն էք, թէ նացիոնալիստ։

— Ի՞նչ, յեղափոխակա՞ն,—գոչեց Ալթունօվը միանգամայն վշտացած,—պօրուչիկ, ինչ եմ արել ձեզ, որ ինձ վիրաւորում էք։

— Ուրեմն, նացիոնալիստ էք։

— Ոչ, պարոն պօրուչիկ, ես միապետական եմ,—պնդեց Ալթունօվը, ձեռը ջերմեռանդօրէն կրծքին զարկելով։—Եւ պատրաստ եմ առաջին պահանջած դէպքում ամեն ինչ զոհել Գահի և Ռուսիայի համար։

— Այդպէս էլ հարկաւոր է,—խրախուսեց նրան Պոստուխովը և մի մեծ կտոր խաւեար դրեց բերանը։

— Իմ կարծիքով, բոլոր ազգերը հաւասար են,—ասաց Տարաշչենկոն։

— Ոչ, կապիտան, այդպէս չէ,—ժխտեց Պոստուխովը, նորից զրգռվելով,—ով Ռուսիայի սահմաններումն է ապրում, պարտաւոր է իրան ռուս համարել, ռուս զգալ և մտածել ինչպէս իսկական ռուս։ Եթէ այդպէս չը լինի, հայրենիքը կարող է կործանվել։

— Այդ բոլորովին ճիշդ է,—գոչեց Ալթունօվը,—բայց չը կարծէք, պարոն պօրուչիկ, որ ես բաղդ չունենալով զօրքին ծառայելու՝ երկչոտ եմ կամ անընդունակ զէնք գործածելու։

Օհ, ոչ, նա ճանաչված է ինչպէս լաւ որսորդ։ Նա դիտէ յիսուն քայլի վրա տարբերակել կրակել խոտի մէջ դրած ձուն կամ թռցնել ծառի վրա նստած թռչունի կուրծն ու պոչը։

— Եթէ կուրծն ու պոչը թռցնէք, տակը ի՞նչ կը մնայ,—նկատեց Պոստուխովը կէս հեղնօրէն և կէս ներողամտաբար ժպտալով։

— Ի հարկէ, բայց այնու ամենայնիւ որ տեղն ուզենամ, այն տեղն էլ կը զարկեմ։

(Պը շարունակվի)

ՄԱՄՈՒԼ

Պոլիտեխնիկումի տեղի ընտրութեան հարցը մեր երկրի վրաց և վրացիների ձեռքով հրատարակվող ռուսերէն թերթերի համար օրվայ հրատապ և չարաբաստիկ հարցն է դարձել։ Այդ թերթերը՝ «Закавказская Рѣчь», «Закавказье» և «Սախալիս Գաղէթի» խնդիրը դրել են շատ զարտուղի և անարդար հողի վրա, այն է՝ ազգայնական հողի վրա, որ շատ մածուցիկ և լպրծուն մի հող է, որի վրայով քայլելիս կարելի է սայթաքել և ոտքը խորտակել։ Մրցութիւնը Նաւթլուղի և Սաբուրթալոյի միջև և փոխարքայի որոշումը յօգուտ Նաւթլուղի, իբրև պոլիտեխնիկումի վայրի, յիշեալ թերթերը նկատում են իբրև մրցութիւն, պայքար հայ և վրացի ազգերի միջև, հետևաբար, Նաւթլուղի ընտրութիւնն ևս, համարում են իբրև յաղթանակ «հայկական-ազգասիր քաղաքականութեան» ընդդէմ վրաց ժողովրդի։

Բերենք օրինակներ.

«Закавказье» թերթը կիրակի օրվայ իր համարում մի առաջնորդող յօդուածի մէջ այն միտքն է յայտնում, որ իբր սօլոլակցի (իմա՝ հայ) հարուածները երկու տեղերի համեմատական արժանիքները լուսաբանելու խնդիրը վերածեցին կուռ վրացիների դէմ։

Եւ լրագիրը վերջացնում է այս խօսքերով.

Եւ այսպէս, պոլիտեխնիկումը կը լինի Նաւթլուղում... Այո, Նաւթլուղում կը շինվի առաջնի կողքին մի երկրորդ սպանդանոց, ուր նրա մէջ մորթված արդարութեան ողբը պէտք է բարձրանայ։ Եւ այդ ողբը կը խառնվի այն անէծքների հետ, որոնց մասին մարգարէացել է գեներալ-լէյտենանտ Դարաէվը...

Մի անգամ ևս շնորհաւորում ենք մեր բարի դրացիներին իրանց յաղթութեամբ վրացիների վրա...

Ուրեմն բարի դրացի հայերը մորթել են արդարութիւնը և դրա համար սպանդանոց են կառուցանում...

Աւելի թունաւոր, մաղձոտ յօդուածներ է գրում «Закавк. Рѣчь» թերթը, յօդուածներ, որոնք ուղղակի շօշափում են հայի, իբրև ազգութեան, պատիւը և արժանապատուութիւնը.

Նաւթլուղի կուսակիցները այսօր ցնծում են։ Նրանց փոքրիկ Արշակները և Համբարձումները կը ստանան տեխնիքական գիտելիքներ հէնց Հալաբարի սրտում, սպանդանոցի և դերեզմանատեղի մօտ։ Սօլոլակի նոր սերունդը կը մեծանայ և կամրանայ և կը շարունակէ չափել ամեն բան արշինով։ Փոքրիկ «արշակներից» կը ստացվեն հայկական մեծ «գործիչներ», որոնք այսօրվայ «լուսաւորված» սօլոլակցիների նման կապացուցանեն իշխանութեան ներկայացուցիչներին կովկասում, թէ Նաւթլուղը հարիւր արշին գեղեցկութիւն և շքեղութիւն ունի, իսկ միւս շրջանները ոչ մի հատ։

Այն հեղուցիչ հոտը, որ կարձակվի պոլիտեխնիկումի ապագայ շինութիւնից, կը տիպի վրացիներին և ռուսներին շատ հեռու փախչել, և Մուխրանեան կամուրջի այն կողմը կը մնան մարդիկ, ուրոնք երբէք չեն իմացել, թէ ինչ է նշանակում հոտառութեան և զգուանքի զգացումը։

Վրաց թագաւորութեան հին մայրաքաղաքը կանցնի հաւաբարցիների ձեռքը և երկրի ապագայ այցելուն վշտանար կը շրջի մի ժամանակ այստեղ ապրող կուլտուրական մի ժողովրդի անցեալ մեծութեան հին աւերակներ—կոթողների մէջ։ Այդ աւերակների տեսքը և վայրի խոտը նրանց կամարների տակ չէ կարող չը ներշնչել ամեն մէկի մէջ դառն ափսոսանք։

Ուրեմն դուրս է գալիս, որ հայերը, իբրև մօնգօլներ, աւերել են մի կուլտուրական ժողովրդի երկիրը և վայրի խոտ բուսցրել այնտեղ։

Թուլայիսում հրատարակվող «Էրի» թերթը գրում է.

Մենք, յիրաւի, արժանի կը լինէինք գտատարտութեան, եթէ անընդունակ լինէինք համեմատվելու մեր դրացիների հետ, բայց միևնոյն ժամանակ մենք սաստիկ եղկելի կը լինէինք, եթէ չը հասկանայինք իսկական դրդումները հայ շովինիստ բուրժուազիայի մի սպառազինեալ խմբի, որ գործում է կուլիսների հետևում։ Մենք արդէն այնքան կոյր չենք, որ չը նկատենք մեր թշնամիների սպանիչ ձգտումները իրանց ամբողջ երկարութեան և լայնութեան մէջ։

Մեր թշնամիները իրանց նպատակի համար ընտրել են մեզ և չեն խնայում ոչ ոյժ, ոչ եռանդ, ոչ խորամանկութիւն և նենգութիւն, ոչ հաղարաւոր այլ աննշան միջոցներ՝ մեզ դէմ կուելու համար։

Ապա լրագիրը հասնում է սպառնալիքներիս։ Ընդունելով իբրև իրողութիւն, որ հայերը կամենում են կռուել վրացիների հետ, նա ասում է, «որ եթէ մէկի մաքիցն անցնէ ուղղել մեզ դէմ սուր, նա կարող է խկոյն զգալ, որ յանձին մեր նա ունի մի հակառակորդ՝ ոչ այնքան տկար և անպաշտպան»։

— Ի՞նչ, յեղափոխակա՞ն,—գոչեց Ալթունօվը միանգամայն վշտացած,—պօրուչիկ, ինչ եմ արել ձեզ, որ ինձ վիրաւորում էք։

— Ուրեմն, նացիոնալիստ էք։

— Ոչ, պարոն պօրուչիկ, ես միապետական եմ,—պնդեց Ալթունօվը, ձեռը ջերմեռանդօրէն կրծքին զարկելով։—Եւ պատրաստ եմ առաջին պահանջած դէպքում ամեն ինչ զոհել Գահի և Ռուսիայի համար։

— Այդպէս էլ հարկաւոր է,—խրախուսեց նրան Պոստուխովը և մի մեծ կտոր խաւեար դրեց բերանը։

— Իմ կարծիքով, բոլոր ազգերը հաւասար են,—ասաց Տարաշչենկոն։

— Ոչ, կապիտան, այդպէս չէ,—ժխտեց Պոստուխովը, նորից զրգռվելով,—ով Ռուսիայի սահմաններումն է ապրում, պարտաւոր է իրան ռուս համարել, ռուս զգալ և մտածել ինչպէս իսկական ռուս։ Եթէ այդպէս չը լինի, հայրենիքը կարող է կործանվել։

— Այդ բոլորովին ճիշդ է,—գոչեց Ալթունօվը,—բայց չը կարծէք, պարոն պօրուչիկ, որ ես բաղդ չունենալով զօրքին ծառայելու՝ երկչոտ եմ կամ անընդունակ զէնք գործածելու։

Օհ, ոչ, նա ճանաչված է ինչպէս լաւ որսորդ։ Նա դիտէ յիսուն քայլի վրա տարբերակել կրակել խոտի մէջ դրած ձուն կամ թռցնել ծառի վրա նստած թռչունի կուրծն ու պոչը։

— Եթէ կուրծն ու պոչը թռցնէք, տակը ի՞նչ կը մնայ,—նկատեց Պոստուխովը կէս հեղնօրէն և կէս ներողամտաբար ժպտալով։

— Ի հարկէ, բայց այնու ամենայնիւ որ տեղն ուզենամ, այն տեղն էլ կը զարկեմ։

(Պը շարունակվի)

Ճիշդ է, վրաց թերթը կամենում է առանձնացնել հայ դեմոկրատիան և իր սըլաքները արձակել միայն հայ բուրժուազիայի դէմ, որին նա անուանում է հայ ժողովրդի համար խնքնակոչ ցաւող, և զարմանք է յայտնում, թէ ինչն է ստիպում նրան՝ այդ բուրժուազիային հաշել, բայց և այնպէս յարձակումների օբիեկտը մնում է հայը։ Ապա թերթը ասում է. «Թող անեն, ինչ որ կամենում են, բայց թող ի նկատի ունենան, որ մեզ հետ պէտք է աւելի զգոյշ լինել, որովհետև մեր մէջքերը հարուածներ չեն սանում»։

«Սախալիս Գազէթի» № 1057-ում զետեղված է մի ընդարձակ յօդուած, նուիրված կովկասեան պոլիտեխնիկումի կառուցման տեղի խնդրին, որի մէջ ի միջի այլոց հետևեալ տողերն են առաջ բերված։ Խօսելով Բագուի քաղաքային խնքնավարութեան առաջ բերած ուլտիմատումի մասին տեղի ընտրութեան նկատմամբ, թերթն ասում է.

«Ի՞նչպէս կարելի է կանխօրէն այսպիսի ուլտիմատում դնել, եթէ սրատումդ այլ մտադրութիւն չունիս։ Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայկական նացիօնալիզմ, որն այսօր իր յաղթանակն է ասնում։

«Իրաք դէմ առ դէմ ելան պոլիտեխնիկումի շահերը և հայութեան ագրէսսիվ ազգայնականութիւնը, և վերջինս յաղթանակեց»։

Գրելով վրաց ազնուականութեան կողմից նուիրաբերվելիք Սաբուրթալոյի և նուիրաբերող ազնուականութեան անկեղծութեան մասին, թերթը վերջումն ասում է.

«Բայց հայկական ագրէսսիվ ազգայնականութիւնը ոտնակոխ արաւ բարձրագոյն դպրոցի շահերը և ստեղծեց այնպիսի պայմաններ, որ Կովկասի բարձր կառավարիչը ստիպված եղաւ առաջնութիւնը Նաթլուղին տալ»։

«Թեմի» շաբաթաթերթը պոլիտեխնիկումի մասին գրելով, ի միջի այլոց հետևեալ տողերն է գրում։

Այո, այսօր, երբ վերջնականապէս վճռվեց պոլիտեխնիկումի կառուցման հարցը Նաթլուղում, պատմական օր պիտի համարել, բայց ոչ նրա համար, որպէս «Т. Л.» թերթում ասում է իրան ճշմարիտ ռամկավար յորջորջող Ա. Բաբանը և նրա նման ռամկավար Զաբարը, այլ նրա համար, որ ներկայիս քաղաքային վարչութիւնը, դաւանանելով քաղաքային դեմոկրատիային, ամէն ճիգ ու ջանք թափեց սպիտակը սև ցոյց տալ և ընդհակառակն։ Մենք երբէք չէինք լինի Սաբուրթալոյի կուսակից, — մանաւանդ որ այնտեղ կան և միջի այլոց վրացի կալուածատէրեր,—եթէ նա Նաթլուղի հանդէպ գերակշռութիւն չունենար։ Քաղաքային վարչութիւնը իր ընած դիրքով ուղղակի թաղեց այդ մեծ գործը։ Մինչ մեր քաղաքի այլևայլ ազգութիւնների դեմոկրատիան չէ նկատում, որ այս գործում մի ինչ-որ կեղծիք և խորամանկութիւն գոյութիւն ունի։ Եւ մինչ այս հարցը այսպիսի վճիռ կը ստանար, եթէ դեմոկրատիան քաղաք. խնքնավարութեան մէջ ունենար իր ներկայացուցիչները։

Մի խօսքով, վրաց բոլոր թերթերը ամէն կերպ աշխատում են գրգռել վրաց ժողովրդի ազգասիրական զայրոյթը հայերի դէմ, ներշնչելով այն միտքը, թէ հայերը ոտնակոխ են անում վրացիներին Լրանց մայրաքաղաք Թիֆլիսի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՈԼԳԱՐԻԱՅՈՒՄ

Մեզ լաւ յայտնի ռուս ժուրնալիստ Թ. Օլգինը, որ այժմ աշխատակցում է «Р. Сл.» թերթին և իբրև նրա յատուկ թղթակից գնացել է Բոլգարիա, հեռագրում է յիշեալ թերթին Սոֆիայից, որ պարլամենտական ընտրութիւնների ժամանակ քաղաքներում կառավարչական կուսակցութիւնը ամէն տեղ պարտութիւն է կրել։ Սոֆիայում, ուր ձայների ընդհանուր թիւը եղել է 10,146, կառավարութիւնը ստացել է 4404 ձայն, սոցիալիստները՝ 3300, ռուսոֆիլները՝ 936. Վիդդինում կառավարութիւնը ստացել է 737, սոցիալիստները՝ 425, արմատականները՝ 769. Բուրգասում 1823 ձայներից կառավարութիւնը ստացել է միայն 793 ձայն և այսպէս շարունակաբար։ Այնպէս որ՝ ամէն տեղ օպոզիցիան յաղթել է և Բաղդասարով-վի, Գենադիևի կառավարութիւնը կրել է սոսկալի պարտութիւն։ Բոլգարիայի 9 խոշոր քաղաքներում 31,708 ձայներից կառավարչական կանդիդատները ստացել են միայն 13,468 ձայն կամ 42%, իսկ օպոզիցիայի կանդիդատները՝ 18,240 կամ 57%։ Խնդիրը պէտք է վճռեն ընտրութիւնները գիւղերում, բայց շատ հաւանական է, որ գիւղերում ևս նոյն հետևանքները լինեն։ Ցամենայն դէպս Բաղդասարովականները և Ստամբուլովականները կրեցին բարոյական ծանր հարուած, և կառավարութիւնը իր դէմ է ունենալու պարլամենտում ոչ միայն ռուսոֆէրներին, այլ և սոցիալիստներին։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Լուրերի համաձայն, Պետերբուրգում թիւրքաց դեսպան նշանակվելու է Օսման-Նիզամի փաշան։

✦ Միլանի մօտ երկու գնացքների ընդհարման ժամանակ վիրաւորվեցին 16 մարդ, որոնցից 4-ը մահացուն վնասը կէս միլիոն է։

✦ Բախտիարները մեծ պատրաստութիւններ են տեսնում գարնանը դէպի Թէհրան արշաւանք գործելու համար։ Նրանք իրանց զէնքերը ու ռազմամթերքը ստանում են դրսից։ Պարսից կառավարութիւնը այժմեանից ձեռք է առնում հարկաւոր միջոցներ։

✦ Գերմանական սոցիալ-դեմոկրատիական Ֆրակցիան իր նախագահ ընտրեց հանգուցեալ Բեբէլի տեղ Շէյդեմանին։

✦ Պետերբուրգում ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ բոլգար սոցիալիստների անսպասելի աջողութիւնը ընտրութիւններին՝ սպառնում է առաջ բերել հակագինստիական պրոպագանդա։ Ֆերդինանդ արքայի օրերը համարված են։ Սոցիալիստների նպատակն է Բոլգարիան յայտարարել հանրապետութիւն։

✦ Վերջին հեռագիրը Սոֆիայից յայտնում է, որ կաբինէտը գտնվում է յուսահատ դրութեան մէջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

2 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հանքային ինժեներ ժակը նշանակվում է կովկասեան հանքային վարչութեան կառավարիչ։

Սւարավեցին գիւղատնտեսական խորհուրդի 14-րդ նստաշրջանի նիստերը։ Երկրագործութեան գլխաւոր կառավարիչը իր ճառի մէջ շեշտեց, որ երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը զգում է տեղական զէմստվային գործիչների հետ միասին աշխատելու անհրաժեշտութիւնը։

Արդարադատութեան մինիստրը Պետական Դումայի նախագահին ուղարկեց դատական քննիչի որոշման պատճէնը այն մասին, որ Պետական Դումայի անդամ Կերբէնակին իբրև մեղադրեալ պատասխանատուութեան է ենթարկվում քր. պատժ. 13-րդ և 279-րդ յօդուածներով։

ՇՎԷՅԻՐԻ։ Երէկ երեկոյեան չը մաքրած ծխնելոյզի պատճառով հրդեհ ծագեց մեծ դքսի պալատի ընդարձակ շինութեան մէջ։ Աշտարակը ոսկէ սանդուղքով բոլորովին կործանվեց, կրակը լափեց մեծ ոսկէ դահլիճը։ Գիշերով պայթում եղաւ աշտարակում գտնվող որսորդական իրերի պահեստատեղում։ Կրակը ոչնչացրեց պալատի 1/3-րդ մասը։ Այրվեցին շատ պատկերներ։ Կրակը հանգցրին էկս գիշերվայ ժամը 3-ին։ Վնասը 2 միլիոն մարկ է։

ԽԷՐՆԻՑ։ Գիշերս Բրաունսդորֆի մօտերը գնացքի անցնելու ժամանակ տունէլը փլվեց։ Գնացքը թաղվեց ժայռի փլուածքի տակ։ Զորս մարդ սպանվեցին, 7 հոգի վիրաւորվեցին ծանր, 27 հոգի՝ թեթև։

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ՍՈՒԱՔԵԼԵԱՆ



Вотанъ

ЛАМПА СЪ ГЯНУТОЙ ПРОВОЛОЧНОЙ НИТЬЮ ПРОДАЕТСЯ ВСЮДУ.

РՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈՒԿԿԷՐՏ ԵՒ ԿՕՄՊ. Թիֆլիս, Գոլովինսկի պր. 21.

(4. 2.) 949. 0—14

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№4711. ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՑ ՍԱՊՈՆԸ

Գործ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկությունը։

Յիսակ գործարանատէր

Շնորհիվ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցէրինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապոնը» կանոնաւոր գործածողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշուով, որպէս իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ ամտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պատերին. յայտարար. «№ 4711» մարկայով։

(М. 358723) 9—6

ԿԱՐԱ-ԳԱՐԻՒԾ

ԵՐՈՒԱՆԴ ԳՈՇ

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԻՑ.

Эта небольшая книжка является типичнымъ литературнымъ произведеніемъ новаго теченія въ армянской беллетристикѣ.

„ЕРВАНДЪ ГОШЪ“ напоминаетъ собою романъ Арцыбашева—„САНИНЪ“, но мало нашумѣвшій въ свое время. Оба романа имѣютъ между собою большое сходсто и много общихъ чергъ въ смыслѣ соціальнаго міровоззрѣнія главныхъ дѣйствующихъ лицъ, и оба они являются продуктомъ тождественныхъ соціальныхъ условій.

Оба произведенія появились въ свѣтъ почти одновременно, въ смыслѣ характеристики общественной среды, хотя романъ Арцыбашева опередилъ „ЕРВАНДЪ ГОШЪ“ на 3—4 года.

Соціальныя условія, создавшія въ русской литературѣ романъ Арцыбашева, а въ армянской литературѣ—„ЕРВАНДЪ ГОШЪ“, является общими, характеризующими общественную жизнь страны и одинаково воздѣйствовавшими на обѣ литературы.

Романъ этотъ носитъ лишь нѣкоторое непосредственное вліяніе „САНИНА“, но онъ свободенъ отъ его эротическаго кошмара, и является вполнѣ оригинальнымъ, чуть ли не первымъ произведеніемъ характеризующимъ новое содержаніе современной армянской беллетристики.

Такимъ образомъ, въ лицѣ ЕРВАНДЪ ГОША, въ армянской литературѣ изображается новый современный типъ интеллигенціи.

Нынѣ же, когда изсякли общественныя тенденціи и жизнь влилась въ форму общественнаго уклада, нѣтъ больше въ ней общественной интеллигенціи, въ ней теперь господствуетъ индивидуалистическая интеллигенція, и въ новой армянской беллетристикѣ, первымъ образцомъ которой служитъ „ЕРВАНДЪ ГОШЪ“,—совершенно отсутствуетъ эта общественная интеллигенція, и на смѣну ея открыто и властно выступаетъ индивидуалистическая интеллигенція. (Մի կտոր „Баку“ թերթի մի ընդարձակ յօդուածից)։

Փիրքը վաճառվում է Թիֆլիսի և Բագուի յայտնի գրավաճառների մօտ։ ԳԻՆԸ 50 ԿՈՊ.։

(4.) 1123. 2—1

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրբաթեանի . . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Զինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրբաթեանի . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՈՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

(3) 10—2

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (ներարկումն 606, ու 914-ով) միզասեռական, վեներական ու կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյան։
սոմն օր (Պանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։

Սօլոլակ, Բերուսովսկայա, № 33 (անկիւն Պասկեվիչ փող.), տելեֆոն 11—75.

(չ. կ) 785. 100—28

ԲԱՑՎԱԾ Է 1914 թ. „ԱՂԲԻՒՐԻ“ „ՏԱՐԱԶԻ“ ԱՂԲԻՒՐԻ“ ԱՂԲԻՒՐԻ“ ԵՎ „ՏԱՐԱԶ“

32-րդ և 25-րդ տարեշրջանների բաժանորդագրութիւնը։ „ՏԱՐԱԶԻ“ XXV. ամեակի առիթով դպրոցական աշակերտների համար „ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան բաժանորդագրութիւնը ճանապարհածախսով 1 ր.։ „ԱՂԲԻՒՐ“ ԵՎ „ՏԱՐԱԶ“ յաւելուածներով պրէմիաներով 10 ր., արտասահման 18 ր. կամ 50 ֆր.։

Մենք այլևս ոչ մի խօսք չենք ասում, թէ ինչպէս են հրատարակվում «ԱՂԲԻՒՐԸ» և հայկական միակ իլլիւստրասիոն «ՏԱՐԱԶԸ». այդ խօսքը պատկանում է մեր հաճախորդներին։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ-ТАРАЗЪ“. Tiflis. Direction, Agbür-Taraz.

Խմբ.-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

(չ.չ.) 31 5—3

Նոր լոյս տեսաւ

ժողովրդական ընթերցանութեան համար շատ հետաքրքրական նիւթ

„ԻՆՉՊԷՍ ՍՏԵՂԾՎԵՑ ՄԵՆԱՀՀ“

✦ Գրքոյկը։ Գինը 10 կ. (օ. մ.) — ✦ — Դր. Ս. Խոտիկեանի կազմած 1115. 2

Սուեսրի եւ Արդիւնաբեր. Միութեան. իրաւասութեան ներքոյ գտնվող

ՀԱՅԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

— (ԵՐԵԿՈՆԵՐԸ) —

Ր. Զ. ՐՕՄԱՆԵԱՆԻ

(Հիմնված 1908 թ.)

Թիֆլիս, Զէքէլզօվսկայա փողոց (Ամալոկայա), № 47, տրամվ. կայ. մօտ, III հաշտարար Գասար. մօտիկ։

Դասընթացքները 5-ամեայ, ամենօրեայ պարապմունքներով։

Պարապմունքների սկիզբը յունվարի 2-ից 1914 թ.

Դասընթացքներում պատրաստվում են երկու անձեր արդիւնաբերական և ֆինանսական հիմնարկութիւնների համար, ուսանվում է սուեսրական մասնագիտութիւն հաշտապահական և տնտես. գիտութ. վերաբերեալ։ Հաշտապահութեան և թղթակցութիւնների վերաբերեալ զարձնական պարապմունքները տեղի ունեն գաբինէթներին կից յատուկ դասարանեցներում՝ մայրաքաղաքների կուրսերի օրինակով, պարզարոց, բէյ դեսերից ստանված նիւթերով (առեւտ. դոկումենտներով և այլ ձեւերով) և բարդ ձեռնարկութիւնների՝ մինչև ընդհանուր-առեւտրական, նոյնպէս և բանկային հաշտապահութեան միամեայ պարապմունք վարումով։ Պարապմունք տարվում են՝ 1) ա. Հաշտապահութիւն—պարզ. իտալական կրկնակի, գերմ., ամերիկ., ֆրանս., անգլ., կամերալ և առտ. երբեակ (ամեն մի սիստեմն անցնվում է գործն. աշխատանքի օրինակներով), բ. Հաշտապահութիւն—ընդհ.-առտ., ֆաբրիկային, գործարանային, բանկային, փոխատու-խնայող. և վարչական ընկ., նաւթարդիւնաբեր., նաւթա-գործար. և ապահովագր.։ ՀԱՇՏԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿԱՐՏԱԵԾՆ ՍԻՍՏԻՄ։ 2) Առեւտրական բաբանութիւն։ 3) Առեւտրական իրաւունք։ 4) Մաւրհակային իրաւունք։ 5) Առեւտր. թղթակցութիւն (տեսական և գործն.)։ 6) Թւաբան. հատիչի վրա (առտար. և մասեմատ. գործող. հատիչի վրա նորագոյն հնչակ ձեւով)։ 7) Գեղագրութիւն (ուղղագրութիւն և վերամշակումն ամենավատ ձեռագրի)։ Աշ-պարապմունք տարվանք. 8) Բաղարանեցնութիւն։ 9) Սղագրութիւն։ 10) Ռիմինգտօնի վրա գրել։ 11) Ռուսաց լեզու։ 12) Թւաբանութիւն։ Դասատուներ են հրաւիրված մասնագէտներ բարձրագոյն հոմտաս. կրթութեամբ։ Ունկնդրների և ունկնդրուհիների ընդունելութիւններն ամեն օր կուրսերի գրասենեակում, առ. ժ. 10-ից մինչև ցեր. ժամը 3-ը և երեկ. ժ. 5—8-ը։ Կանոնագրութիւնը և ծրագիրը ուղարկվում են ձրիաբար։

(օ մ.) 1110. 0—2

Ս. ԲԵԹԵՐՍԲՈՒՐԳԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱԼՈՇՆԵՐ

1860 T.P.A.P.M. СПЕТЕРБУРГЪ ТРЕУГОЛЬНИКЪ

ԹՐԷՈՒԿՕԼՆԻՔ (ԷՐԱՆԿԻՒՆ)

(4.3.) 0—17

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный